

18376

5574 И. Голубович

Голубович
И. Г.

И - 1881

891.99

S-38

QmD. 14
w = 301

891.99

Ln-38

ur

ԿՈՌԻԱՊԱՏՃԱՌԸ

ԵՍ ԷԻ

ԿՕՄԵԴԻԱ—ՎՕԴԸՎԻԼ

ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

(Ն Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն)

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1881

Է. ՏԷՐ — ԳՐԻԳՐԵԱՆՑԻ ԿԱԿԱՐԱՆ:

Ե Ր Ե Ի Ա Ն



1001
4071

49,14

Дозволено Цензурою Тифлисъ. 21 Апрѣля
1881 года.

ՀՈՌԱՊԱՏՃԱՌԸ

ԵՍ ԷԻ

Типографія Эмина Теръ-Григорянцъ въ Эривани, на углу Астафьевской
и Бебутовской улицъ.

ԽԱՂԱՅՈՂ ԱՆՁԻՆ

ՄԻԽԱՅԵԼ ԵԳՈՐԻԶ

ՄԱՐԻԱ, նորա կինը:

ԳԷՈՐԳ, նոցա ծառան:

ԱՆՆԱ, նոցա աղայինը և գէորգի սիրուհին:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ, Միխայել Եգորիչի սիրելի և մտերիմ ընկերը, իսկ Մարիայի ծածուկ սիրեկանը:

ԱՆՅԱՏ ՈՄՆ

ՇԱՐՄԱՆԿԱ ԱԾՈՂ

ՓՈՔՐԻԿ ԵԳԶՈՒՀԻ

} անտեսանելիք:

Անյիւր պատահումէ լուսաւորումս չաղաքներէջ մէկում:

12 0 03

ԿՌՈՒԱՊԱՏՃԱՌԸ

ԵՍ ԷԻ

ԿՕՄԵՏԻԱ—ՎՕԴԸՎԻԼ ՄԷԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Տեսարանը ներկայացնումէ նախասենիակ: Խորքում դուռը, որը բացվումէ փողոցի վերայ: Աջ կողմում երկու դուռը. առաջինը—դէպի հանդիսականները, Միխայել Եգորիչի սենիակներին է պատկանում, իսկ երկրորդը—ծառայի սենեակին: Չախ կողմում, դէպի խորքը, լուսամուտ, իսկ դէպի հանդիսականները մի դուռ որ տանումէ դէպի դահլիճը և Տիկին Մարիայի սենիակները:

(Վարպետը բարձրանալիս լննան սրբումէ յատակը: Գէորգը ծածուկ դուրս է դալիս իւր սենիակից և մօտենումէ

եանկց նորան, զգուշութեամբ խորամէ նորս աջ ուսին և ինքը, զխանայրով որ պիտի Աննան շուսգա դէպի նոյն կողմը, թագնուով նորս ձախ կողմում:

ՏԵՍԻՒՆ Ե.

ԱՆՆԱ ԵՒ ԳԵՈՐԳ:

ԱՆՆԱ:

Այրծես թէ մէկը խբեց ուսիս . . .

(Ինչէն Աննայի առաջին դիւրք բռնելը, Գեորգը անցնումէ նորա ետը: Նա դարձեալ խորամէ, բայց այս անգամ Աննան խկոյն յետ է դռնում և Գեորգը, չկարողանալով թաղնուիլ կլկին անգամ, կանգնումէ առաջին և ձեռքը դնելով իւր կուրծքին, կարծես թէ ամենայն խոնարհութեամբ և ժպիտով, զուիս է տալիս նորան):

ԱՆՆԱ:

Ա . . . բռնեցի, բռնեցի էլի դու ու քո սատանայութիւնները:

ԳԵՈՐԳ, քաղցր:

Ես ու սատանայութիւն . . . Զէ, շատ է հեռու ինձանից այդ կոչումը: Ես . . . ես . . .

ԱՆՆԱ:

Չլինի՞ անմեղ հրեշտակ ես:

ԳԵՈՐԳ, դժարութեամբ:

Ի . . . ի . . . ի . . . հարկէ:

ԱՆՆԱ:

Այսինքն կռուացնող հրեշտակ . . .

ԳԵՈՐԳ:

Ե՞ս . . . :

ԱՆՆԱ, սիրով:

Ապա ե՞ս Գո արարմունքը չէ՞, որ էս ըռպէիս պարոնն ու տիկինը շուն ու կատու են դառել . . . էհէ, զգուշացիր հա . . . կրնուիս, յետոյ ձեռքներից չես պրծնիլ:

ԳԵՈՐԳ:

Օ օ ծիմ հրեշտակս, իմ անմեղ տատարակս, ապա էն բռն էր որ երկու շարաթ սորանից առաջ իմ գլուխս էին հանում: Տեսնումես, էս արարմունքիցս յետոյ ինձ ինչպէս հանգիստ են թողնում: Եթէ ես էսպէս չանէի հիմա վաղուց էին ինձ դուրս արել ու իմ 6, 7 տարուայ ծառայութիւնս ոտնակոխ արել: Նս էլ էն ժամանակը ո՞ւր գնայի առանց քեզ:

ԱՆՆԱ, ժպիտով:

Իսկ եթէ ես նորանց հասկացնեմ . . .

ԳԵՈՐԳ:

Օ՛, չէ, չէ, դու իմ անուշահոտ վարդս, դու իմ մանրաթերթիկ մանուշակս, դու իմ . . . դու իմ . . . (Վրա չէ գալիս, հրածումէ):

ԱՆՆԱ, քնքուշաբար:

Լաւ, լաւ, մի՛ երկարացնիլ, կեղծաւոր աղուէս:

ԳԵՈՐԳ:

Յետոյ, յետոյ սնցեց իմ վարդն ու մանուշակը, իսկ քո կեղծաւոր աղուէսը . . . Յետոյ դու ինձ էդ աչքով ես նայում: Իմ միտքս էնէ որ՝ ոտքս էստեղ նորէն պնդացնեմ, քեզ հետ ջան ասենք, ջան լսենք, մի ժամանակից յետոյ պսակուենք, մի թեթեւ դուքան ունենանք ու մի կտոր հացի տէր լինենք ու դուէլ էդպէս . . .

ԱՆՆԱ, ուրախ:

Բաղդաւար:

ԳԵՈՐԳ:

Ի հարկ է բաղդաւար, ապա ինչ ես կարծում . . . Դու լաւ գիտես որ էս տան բոլոր հարսանիքը քեզ համար է՝ ու հիմա ուզումես գնալ իմաց անել . . . :

ԱՆՆԱ, ժպտալով:

Լաւ, լաւ, ինչ ուզումես արա, բայց ինձ բանի մէջ չխառնես՝ թէ քու Աստուածը կսիրես:

ԳԵՈՐԳ, ուրախ, կամենալով համբուրել:

Էդ լեզուիդ պտտանին մատաղ, մի բեր . . . մի բեր . . . :

ԱՆՆԱ, դուքս թռչելով գրկից:

Սպասիր, սպասիր . . . մի բան էլ հարցնեմ, յետոյ:

ԳԵՈՐԳ, դադարելով:

ՀԷ:

ԱՆՆԱ:

Ախր մի ասա տեսնեմ, էդ ինչ կնշանակի՝ որ հրամայել են թէ նախաճաշը էստեղ նախասենիակում պիտի ուտեն էսօր, ո՞վ է տեսել մի էդպիսի բան:

ԳԵՈՐԳ, իբր զարմանալով

Ես ինքս էլ չեմ հասկանում, խաչը գիտես, բայց ինչ անես որ հրամայում են. էստեղ աւելի ուրախ է, ասումեն, լուսամուտները փողցի վերայ է . . . էս է, էնէ, ո՞վ է հասկանում: Հրամայում են, պիտի կատարենք: Էս աթոռք մաթոռքն էլ նոր բերեցի ես:

ԱՆՆԱ, նայելով աննդհատ աչքերին:

Ա՛յ ցինբազ, ինչպէս երևումէ էլի քո ստատանայութիւններն են, էլի մի բան ունիս երևի մաքումդ: Պարզն ասա, պարզը:

ԳԵՈՐԳ, ծիծաղալով:

Սուս կաց, վերջը կիմանաս. բայց եթէ պարոնը հարցնի, ասա տիկինը այսպէս հրամայեց, տիկինը հարցնի, ասա պարոնը այսպէս հրամայեց: Դու ասա, պատասխան տուողը ես եմ:

ԱՆՆԱ:

Դէ հգպէս ասա է . . . Բայց չէ, ոչ կե-
րեամ, ոչ էլ ինձանից հարցնեն, որ ես էլ ստի-
պուեմ պատասխանելու: Դու գիտես նրանք:

ԳԷՈՐԳ, ուրախ:

Հա, ես քո հոգուն մեռնեմ, հա: Դու բո-
լորովին լոյս մի ընկնիլ — ես գիտեմ, ամեն բանը
թող ինձ վերայ:

Այսպէս մենչեւ չանեմ, հոգիս
Գլուխ պահել չեմ կարող
Եւ քեզ, միակ իմ հրեշտակիս,
Չեռքս գցել չեմ կարող:

ԱՆՆԱ:

Այո, այո՛ դու աշխատիր
Նպատակդ պսակել,
Բայց միմիայն զգուշացիր
Այդ բանում չը բռնուել:

ՄԻԱՍԻՆ:

Այն ժամանակ միասինք մենք
Մուրբ պսակով միացած
Եւ կաշխատենք և կգործենք՝
Չեռքը ձեռքի միշտ տուած:

ԳԷՈՐԳ:

Եւ մի քանի տարուց յետոյ
Մենք կունենանք սեփական
Եթէ ոչ տուն՝ գոնէ խանութ—
Պարապելու առարկան:

ԱՆՆԱ:

Այն ժամանակ կվազվզեն
Մեր մի քանի մանկիկներ
Պայա, մամա, մեզ կկանչեն
Կուրախացնեն մեր սրտեր:

ՄԻԱՍԻՆ:

Այն ժամանակ միասին մենք
Անկեղծ սիրով միացած
Եւ կաշխատենք և կգործենք
Չեռքը ձեռքի միշտ տուած: *)

ԳԷՈՐԳ, մօտենալով:

Ապա . . . հիմա . . . չեմ թողնիլ մի . . .
մի անգամ . . .

*) Սոր 1, 2, 4 եւ 5 գրերը գրել ելել է На горѣ въ лѣсу
тѣмномъ три богини межъ собой և այլ երգի առջին
գան եղանակով, եւ 3 եւ 6 գրերը, որոնք երգվածն են միմեկին, նոյն երգի
երկրորդ և երրորդ գան եղանակով, ու է. Пресмѣшныя эти дамы և այլն:

(Անձան կամենումէ ձեռքից ազատուիլ, վազդումէ աջ և ձախ բէմի վերայ, բայց Գեորգը վերջապէս բռնումէ նորան և կպցնումէ կուրծքին):

ԳԵՈՐԳ:

Ես ամեն բան յանձս եմ առնում քու մի պա-
շի համար, իսկ դու . . . դու . . . (համբա-
րումէ) էս մէկ . . . էս էրկու . . . (խորհի դռնը
բացումէ և ներս է մտնում Գրիգոր Աբրահամը) էս
էլ . . . էս էլ երեք . . .

ՏԵՍԻՒՆ Բ.

ՆՈՅՆՔ և ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ

Ա՛խ, ինչ վատ ժամանակ ներս մտայ, ներո-
շութիւն:

ԱՆՆԱ, փախչելով:

Ա՛խ . . .

ԳԵՈՐԳ,

Ո՛չինչ, իսկ ինձ համար ամենալաւ ժամանակը
այս էր, համեցէք:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

Միխայիլ Եղորիջ տանն է:

ԳԵՈՐԳ:

Այո՛:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

Իսկ տիկինը:

ԳԵՈՐԳ:

Նոյնպէս:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

Գնա, յայտնիր տիկինիդ որ ես եկել եմ:

ԳԵՈՐԳ, առանձին:

Է՛է . . . սա որ եկաւ տիկնոջ մօտ՝ շատ կնստի,
իսկ շարմանկայ ածողը հիմա կգայ սա որ էս-
տեղ լինի՝ լաւ չէ. հարկաւոր է ճանապարհ
գնել:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

Էլ ինչ ես կանգնել, գնա, շուտ արա:

Գ ԵՈՐԳ:

Ասումէք պարոնին յայտնեմ, այս ըոպէիս
(վաղումէ դէպի պարոնի դռնը):

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ. կանգնացնելով:

Չէ չէ, տիկինիդ յայտնիր, տիկինիդ:

ԳԵՈՐԳ:

Տիկինիս . . . Նա ասել է որ ոչ ոքի չթող-
նեմ ներս:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻԶ:

Գնա՛, ես քեզ ասումեմ, յայտնիր իմ անունը:
Քեզ ինչ ասումեմ ես կատարիր:

ԳԵՈՐԳ:

Ա՛խ . . .

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, գէորգին զարձնելով և հրելով
դէպի տիկնոջ դուռը:

Ախր մախրի ժամանակ չէ, շուտ արա, թէ
չէ ինքս առանց յայտնելու ներս կ'մտնեմ: Վեր-
ջապէս տիկնոջը նշանակած ժամանակին եմ եկել,
հասկանումեմ թէ՛չ, չի կարող շնորհունել: (Կոմե-
նոմէ ինչը ներս հանել:)

ԳԵՈՐԳ:

Գնումեմ, պարոն, գնումեմ, ի սէր Աստու-
ծոյ թողէք յայտնեմ, մի փոքր սպասեցէք, պա-
րոն: (Կոմենոմէ նորէն եւ հարածոմէ):

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, անհամբերութեամբ

Դու այստեղ ընչանցու ես:

ԳԵՈՐԳ:

Հրամաններ կատարելու:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, բարկացած:

Ես քեզ հրամայումեմ գնա և իսկոյն յայ-
տնիր:

ԳԵՈՐԳ:

Այս րոպէիս: (Գնումէ):

ՏԵՍԻՒԼ Բ.

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, միայն:

Այն անասուն . . . (Մարտոմէ) Հնա . . .
պէտքէ վերջնական պատասխան տալ նորան:

Հըմ . . . ես ինչպէս վերկենամ և նորա հետ
գնամ արտասահման: Մարդիք ինչ կասեն . . .
չէ որ երեսիս կ'ըջեն . . . : Մինչև այժմ ո՞վ է
իմանում թէ ինչ հարաբերութիւն ունեմ սորա
հետ, իսկ եթէ գնամ, — արդէն պարզվումէ
ամեն բան և ո՞վ զիտէ թէ ինչ կայծակներ
պիտի թափեն զլեիս. թէ սորա մարդը և թէ
բարեկամներս . . . Զէ, պիտի կտրական ասել
որ չեմ կարող:

ՏԵՍԻՒԼ Գ:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ և ԳԵՈՐԳ:

ԳԵՈՐԳ, ներս մտնելով:

Տեսնո՞ք պարոն, չի կարողանում ընդունել
զլուխը սաստիկ ցաւումէ, խնդրեց մի ժամից
յետոյ շնորհ բերել:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ. նեղացած:

Իմ անունս տուիր:

ԳԵՈՐԳ:

Այո, պարոն:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ:

Ի՞նչպէս ասիր:

ԳԵՈՐԳ:

Ասացի Գրիգոր Աբրամիչը կամենումէ . . .

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, կարելով խօսքը:

Իսկ նա ինչ ասաց:

ԳԵՈՐԳ:

Ասացին որ մի ժամից յետոյ շնորհք բերէք:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, ինքը կամենալով ներս մտնել

Է, է. . . Նա ինձ համար էդպէս բան չի ասիլ, թէ խօսա՝ ես քո - տեղ պատասխան կտամ:

ԳԵՈՐԳ, նորա և դռան մէջ կանգնելով և խնդրելով:

Պարոն, եթէ կարելիէ մի ժամից յետոյ շնորհք բերէք, իմ հացից զըկուելուս պատճառ մի լինէք. առանց էնէլ այս մի ամիս է համարիս՝ ամեն մի ջնջին պատճառի համար հոգիս հանում են, իսկ եթէ այդպէս անէք, ինձ մի լողէ չեն պահել:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, զիջանելով:

Լաւ կգամ, մի ժամից յետոյ կգամ: (Գնում է Գլուխն շարժելով):

ՏԵՍԻՒ Դ.

ԳԵՈՐԳ, միայն:

Հազիւ հազ սորա ձեռից պրծանք, սօ: Այն աներես . . . : Դա նորա համար է հաստատ հաւատացած, որ տիկինը անկարելիէ չնդունի, ինչէ՛ . . . ինքն ու տիկինը . . . ԸԸԸ . . . զի-

տէք էլի թէ ինչ հարաբերութիւն ունեն: Համա ում ճանդն է ընկե՛լ. . . ինձ հրամայում է թէ գնա յայտնիր որ ես եկել եմ. . . ախր ինչպէս կլինի. . . հիմա ուր որ է կգայ շարմանկա ածողը . . . Սա էլ էն սատանան է որ իսկոյն բանից բան կհասկանայ և ամեն բան կպարզուի . . . էն ժամանակ ես ինչ անեմ: Դէ ասա ողջ ողջ գետինը մանեմ էլի. . .

Գլուխը լսում է արգանի ձայնը, որը ածում է յայտ տեղեւ ես երկնքումը երգի եղանակը և մի փոքրիկ աղջկայ ձայն, որը երգում է արգանի հետ նոյն երգը:

ԳԵՈՐԳ:

Ահա եկան, ածումեն (և երգում): Թագէն եկաւ, հինը դուրս (փախչում է իւր սենեակը):

ՏԵՍԻՒ Ե

ՄԻՒԱԼԻ Ե ԳՈՐԻՉ ներգացած ներս մտնելով

Էլի, էլի էս շարմանչեկը. . . տէր իմ Աստուած (զափելով իւր քարէտաշինը և հարկնալով լուսամուտին) ԸԸԸ սիրելի, ասա տեսնեմ ինչո՞ւ ես ամեն օր գալիս և ածումայդտեղ և երգում, քեզ կանչող կայ, թէ ինչէ պատճառը:

ԴՐՍԻՑ ձայն

Ի հարկէ կանչող կայ, եթէ ինձ կանչող ու փող տուող չլինի, ես այստեղ ինչ բան ունեմ:



ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ նոյն պէս

Բայց ասա խնդրեմ, քեզ ո՞վ է ածել տուողը,
փող տուողը անշուշտ կճանաչես նորան:

Դրոյց

Ի հարկէ, նա փող տուող է, փող ուզող խօմ
չէ որ չճանաչեմ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Բայց ո՞վ է, չե՞ կարելի իմանալ:

Դրոյց

Փողը քեզանից խօմ չեմ ուզում, որ կամե-
նումես իմանալ թէ ով է:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ախ ես շատ լաւ եմ հասկանում, բայց մի
պատճառ կայ, նորա համար եմ ես հետաքր-
քիր լինում:

Դրոյց

Ի՛, ձեր միտքն ինչէ, օրական մի երկու շահի
փող եմ ստանում, ուզումէք այն էլ արգելել տալ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Խոստանումեմ քեզ որ երբեք չեմ արգելի, մի-
այն ասա իմանամ զոնէ, այդպէս յանդգնաբար
վարվողը ինչ տեսակ անձն է:

Դրոյց

Երկու աչք, մի քիթունեցող, ու ինքն էլ մի
լաւ սիրտ ունեցող անձնէ: Սօսիկա երգիր:
(Լսողներն երգին եւ որդանի ջայնէրը հալիսի երգին):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ յապառ բարկութեամբ

Էէէ... պարզ բան է, պարզ, բոլորովին պարզ
է. այս բոլորը կնոջս արածն է. նա ինձ բարկա-
ցնելու համար է անում... Չեմսք շարմանչեկը
ինչ յանդուգն պատասխաններ տուեց: Ձէ, ես
պիտի գնամ, անշուշտ պիտի հեռանամ այստե-
ղից, վաղը և եթ արտասահման ես այլ ևս
համբերել չեմ կարող (Բարեկամ զնույն ինչ «ե-
նեմէն»):

ՏԵՍԻԼ Ք

ՄԱՐԻԱ, ներս գալով, միայն:

Տեսնումէք, դարձեալ շարմանչեկը, հաւատա-
ցնումեմ ձեզ որ այդպէս սովորեցրածէ . . . Ձէ,
չափազանց անտանելի է ինձ այս մարդը, ահա
թէ ինչ հնարքներով է կամենում ինձ զայրա-
ցրել: Ամեն օր շարունակաբար սոցա կանչել
է տալիս ու ինձ խեղաբարութեան է հասցնում:
Իւր ամեն մի մագաչափ շարժմունքներով աշ-
խատում է ինձ վրդովեցնել. ես այս բոլորը տա-
նել չեմ կարող, անպատճառ, անպատճառ պիտի

գնալ արտասահման, հեռանալ և բոլորովին մոռանալ սորան . . . (Տիկոյ. տխուրները Բանու-ձէ:) Յի, ինչպէս անախորժ ներդաշնակութիւն է. ամ մեն մի ձայնի փոփոխութիւնը իզգուանք է պատճառում ինձ . . . Ի՛նչ երկար շարունակումեն . . . (Ման է գալիս հոտածելով) Գրիգոր Աբրամիչն էլ չէկաւ, նշանակած ժամանակը անցաւ՝ բայց նա չկայ, իսկ սոքա իմ հոգին հանեցին . . . (Վերջին աստիճանի Բարեպաժ և գնալով իւր սենյակը) Արտասահման, արտասահման պիտի գնալ:

ՏԵՍԻՒ, Ի

ԳԵՈՐԳԸ ԴՈՒՐԱ զալով ծածուկ և մօտենալով լուսամուտին

Այդ պէս, այդպէս, ապրես, առ քո փողը: (Նրգեցողութիւնը դադարում է): Վաղն էլ արի, միւս օրն էլ արի, էն միւս օրն էլ արի, հենց ամեն օր արի, ոչինչ չեն կարող անիլ ինչ որ քեզ անելու լինին էլ՝ պատասխանը իմ էս վզիս: Միայն քեզ էլ եմ ասում. պարոնս ու տիկինս ինչքան որ հարցնելու լինին, վախացնեն քեզ, բոլորովին չվախենաս և իմ անունը երբէք չտաս:

ՁԱՅՆ ՂՐԱԻՅ

Ախր ինչո՞ւ համար ես դու էսքան փող վը չացնում, մի՞տքդ ինչէ:

ԳԵՈՐԳ:

Տօ քեզ ինչ: Դու ամեն օր արի ա՛ծա՛ ու փողդ ստացիր, էլ ինչ րանդէ թէ ինչու համար եմ ևս էսպէս տնում:

ԴՐԱՅ:

Իհարկէ, շնորհակալ եմ, քնաք բարով:

ԳԵՈՐԳ:

Գնաս բարով: (Ձեռները արտելով) է, էս էլ էսպէս, ամեն բան իր կարգով գնումէ: Մինչև էսպէս չանենք զլուխ չենք կարող պահիլ: Հիմի ինչ պիտի անե՞նք. . . . հ'ա, նախաճաշի պատրաստութիւն պիտի տեսնել: (Սեղանը դնում է ձեռքի վրա, գլուխը պտտաւորում է, Բերում է մի գանի տմաններ և գինով և ջրով շիշերը և այլն:) Ապա ո՞ւր է նա, ինչո՞ւ չե երևում, չլինի մոռացել է: (Սօսանալով լուսամուտին) Ա, դու էդտե՞ղ ես, արի, լաւ ժամանակնէ, բայց զգուշութեամբ: (Գնում է ինչ, անյայտի Բանու ձէ դնելու յետոյ:)

ՏԵՍԻՒ, Ը

ԱՆՅԱՅՏ ՈՄՆ ԵՒ ՅԵՏՈՅ ՄԻՒՈՒՆ ԵԳՈՐԻՅ

ԱՆՅԱՅՏ ՈՄՆ

(Ծածկաբար ներս է մտնում մի անյայտ մարդ միջին դռնից աչքը այս և այն կողմն է զցում, նկատում է պատից քաշած պալտօն և ձեռերը մեկնելով, կամենում է վեր բերել այն, բայց

խելոյն պարօնի դուռը բացվումէ և Միխայիլ Եղորիչը մի բանով
կարծես զբաղուած, չնկատելով նորան, անծանօթին, անցնումէ
գէպէ գահլիճի դուռը, իսկ անյայտը, նորան նկատելով իսկոյն
ուղղումէ: Երբ Միխայիլ Եղորիչը այլ ևս չի երևում, իսկոյն
անյայտը կամենումէ նորէն վեր բերել պալտօն և դուրս թռ-
չել, բայց գծադրաբար նորէն ուղղումէ, երբ կրկին երևումէ
Միխայիլ Եղորիչը, վերադառնալով գահլիճից: Վերջինս նկա-
տումէ անծանօթին):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ մտքի մէջ զբաղուած:

Ի՞նչ ես ուզում գիտ:

ԱՆՅԱՅՏ

Ներսէս Իվանիչին եմ հարցնում, պարօն, ասա-
ցին որ այստեղ է:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉը նոյնպէս

Ինչ ներսէս Իվանիչ, էդ անուշով մարդ չկա,
էս տանը

(և ինքը նորէն գնումէ իւր սենիակը, բայց յանկարծ, մտա
բերելով, որ ն սխաճաղը պատրաստուած է նախ ոտենեակում
նորէն վերադառնումէ այդ բանի պատճառը իմանալու համար.
Բայց ինչ զարմանք, երբ նկատումէ որ նոյն անյայտը իւր
պալտօն, մեխից հանելով կամենումէր վեր բերել և իւր այս
պիսի անակնկալ վերադարձը պատճառ է եղել խեղճին մնալ
նոյն դրութեան մէջ, արձանի պէս և երկիւղից նայել իւր աչ-
քերին: ՏԵՍԱՐԱՆ)

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉը բարկացած

Էդ ի՞նչ բանի վերայ ես:

ԱՆՅԱՅՏը մի ձեռքով սրբելով պալտօն¹³

Սրբումեմ պարօն:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ. բարկացած:

Քեզ ո՞վ է խնդրում սրբիս, աւագակի, ես
ծառայ չունեմ: Տեղիցդ շարժել չյանդգնեա
... Գէորգ, Գէորգ, (Անյայտը վայր է գցում պալտօն,
ամենայն ճարպիկութեամբ դուրս է լուզում և փախչում:
Զարայած) Գէորգ . . . փախաւ, անյայտացաւ
. . . ես հասկանումեմ, էս ամենը կնոջս բա-
ներն են, անշուշտ նա կլինի սովորեցրած . . .
ես վաղուց . . .

ՏԵՍԻԼ Թ.

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ և ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ շտապաւ ներս է մտնում

Այստեղ, եմ պարօն, ի՞նչ էք կամենում:

ՄԻԽԱԻԼ, ԵԳՈՐԻՉ

Չէ, լաւ կլինէր մի քանի ժամից յետոյ գայիր:

ԳԵՈՐԳ

Չե՞ս բան կար պարօն, ներողութիւն, հրա-
մայեցէք:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ նեղացած

Ես հրամայում եմ աչքիցս հեռանալ:

ԳԵՈՐԳ զլուս տալով և իսկոյն

Այս լուպէիս: (Գնումէ)

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ ԽԿՈՅՆ

Բայց սպասիր: Էս ինչպէս ես նայում, որ
օրը ցերեկը գալիս են գողութեան և դու թոյլ
ես տալիս պալտօս գողանալու . . . (Մտադ
ստաբէլով) Ասա . . . զգուշացիր, զգուշացիր կը-
կնումեմ, առանց էն էլ զիտես թէ ես այս քա-
նի ժամանակ է որքան անբաւական եմ քեզա-
նից:

ԳԵՈՐԳ Իրր վախենալով:

Պարոն, ես ինքս մնացել եմ մոլորուած, թէև
ձեզ բան չեմ ասել, բայց անցեալ օրը մէկի ձե-
ռից Ձեր նոր խալաթը խլեցի, որը կամենում
էր ծախել մէկին տասը էփան: Ես տեսայ թէ
չէ՝ իսկոյն ճանաչեցի որ ձեր խալաթն է, ուստի
շորերից պինդ բռնելով, կամեցայ քաշշ տալ ու-
զիլ Պօլիցիան, բայց, ձեռքի ունեցած փայտով
մի այնպիսի զօրութեամբ մէջքիս խբեց, որ ձեռ-
քերս էլ դարձան ոտքեր՝ և այնպես չորս ոտանի
հաշիւ գցեցի ինձ տուն . . . Խնչ անեմ պա-
րոն, ինչպէս երևումէ տանու գող է:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, մտքի մէջ զբաղուած:

Տանու գող է . . . այդպէս է, այդպէս, Գե-
որգ, տանու գող է տանու . . . Ես հասկանում
եմ, դա իմ կնոջ աշածն է, անպատ-
ճառ նորա աշածն է . . .

ԳԵՈՐԳ

Գեռ մի բան եմ նկատել, պարոն . . .

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, խԿՈՅՆ:

Խնչ:

ԳԵՈՐԳ

Ես շատ եմ ուշ դարձնում, բայց չեմ կարո-
ղանում վրայ հասնել:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, անհամբերութեամբ

Խնչ է, Խնչ . . .

ԳԵՈՐԳ

Այս քանի օր է, մի մարդ միշտ գալիս է և
տկանջ է դնում այս տեղարեւոյք, նամա-
նուանդ այն միջոցներում, երբ դուք և աղջիկ
պարոնը . . .

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Հասկացայ . . . երբ որ կովում ենք իրար հետ:

ԳԵՈՐԳ

Այո, երբ որ վիճում էք:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ քրթնելով

Երբ որ վիճում ենք . . . երբ որ վիճում ենք . . .
հա, հա հասկանում եմ . . . Այ իժի ծնունդ . . .

այ ստտանի զարմ... Այո, հասկանումեմ... դա
կամենումէ այդպիսով հաշտարար դատաւորի
դիմի... (Գաղտնիսն Բարէն-Լեւոն) Ախ կնանիք,
կնանիք, ի՞նչ ասեմ... ի՞նչ անուանեմ ձեզ, որ
սիրտս հովանայ... (Իբր համեմատով իւր Բարէն-Լեւոն
նը Լափէլ Գեորգի գլխին) բայց եթէ գիտես, որ
այդպիսի մի մարդ ծածուկ տկանջ է դնում,
ինչո՞ւ համար մինչև այժմ ինձ չես ասել, կամ
այդպիսի մի մարդ, որ գողութիւն է անում,
ինչո՞ւ չես զգուշանում... ինչո՞ւ դուրս չեկար
իսկոյն, երբ քեզ կանչեցի:

ԳԵՈՐԳ, իբր վախճնալով:

Նախաճաշի պատրաստութիւն էի տեսնում:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Նախաճաշի պատրաստութիւն էիր տեսնում...
Բայց, հա՛, ես զխաւոր հարցս մոռացայ. (յայց
դուրսը տեղանիս) Է՞ս ինչ կնշանակի...

ԳԵՈՐԳ, իբր խեղճ և վախով:

Այդպէս է հրամայած:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ իսկոյն:

Ո՞վ է հրամայել:

ԳԵՈՐԳ

Ֆիկինը:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ զարմացած:

Ֆիկինը:

ԳԵՈՐԳ

Այո՛,

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, նոյնպէս

Ախր ի՞նչ կնշանակի էդ հրամանը... ո՞վ է
տեսել որ նախասնահկում հաց ուտեն... (Ու
«երբ Բարէն-Լեւոն») ջիւմ հասկանում բոլորովին,
մի մազաչափ անդամ խելքս չի հասնում դո-
րան... (Մարտիրոս) ջէ՛, մի դու ասա դո՛ւ, քո՞
խելքը ինչէ կտրում զրանից:

ԳԵՈՐԳ

Խելքս այնքան է կտրում, որ ինձ հրամայել
են և ես իսկութեամբ կատարել եմ... Կամենաք
բոլորն էլ այս բուպէիս տեղից տեղ անեմ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ջէ՛, չէ՛, թող մնա, տեսնե՛ք դորանով ինչ
պէտքէ անի... թող մնա: (Ման է գալիս և խո-
րը հարձակ: Սիջոյ): Ախ (Իբէլով ճակատին) տըխ-
մար զրուխ... միամիտ զրուխ... Այ այ այ,
այ... Այ սատանայական մտքեր... Սյ չարակամ,
դիւական խորհուրդներով լի մտքեր... այ
նախանձով ու կըքերով լի սիրտ... Ես հասկա-
ցայ... վերջապէս հասկացայ... Այստեղ սեղաչ,

զցել տալով, նախ ինձ է կամենում ճաքացնել, իսկ յետոյ, որ կռիւ զցի և խփոյն վկայ տանի գատաստանի մէջ այն անձին, որը այստեղաւորենք ման է դալիս և գողտուկ լսում ամենայն ինչ... Սորանից յետոյ ինձ կարելի է մնալ այստեղաւորենք... Չէ՛, չէ՛, արասա՛հման պէտքէ զնացած... Բայց եթէ այն ականջ զնողը ձեռս ընկնի, այն է... այն է ես զիտեմ... (Նոյնչով դէպի կնոջ դռնը) Իսկ դու Մարիա, կայծակնա՛հար լինես, անդունդն իջնես... կայծակնաց շանթեր մանեն սիրտդ, Մարիա... աւելի բան չեմ ասում: (Բարկացած գնում է իւր կողմը):

ՏԵՍԻՍ Ժ

ԳԼՈՐԳ, միայն, մի կուշտ ծիծաղում է և յետոյ ասում է:

Սորանից պրծանք, մնաց հիմայ տիկինը... է՛հ, Աստուծոյ ողորմութիւնով՝ նորանից էլ կպրծնենք... կնիկ արմատից զլուխ հանել թէ և դժուար է, բայց ինձ համար՝ շատ հեշտ է: (Ծափ է դուլիս և ծիծաղում) Այ՛ յիշ... ես ու իմ հոգին որ էս իմ խառնակութեան համար, Աստուած դժողքումն էլ տեղ չի գտնի ինձ համար... Ինչ տեսակ չարչարանք որ տան է՛, մեր պապ սատանէքը՝ էլի քիչ է, շատ քիչ է... բայց ի՞նչ արած, պիտի ապրենք թէ չէ...

Ապա ընկիր հալալութեան, արդարութեան ու ջերմեռանդութեան ետեւից, ես իմ Աստուած որ փորդ կշտացնելու համար մի կտոր չոր հաց չես գտնիլ... Էս աշխարհի կանոն ու սովորութիւն է...

Էսպէս եկել է, էսպէս էլ կգնայ:
Մարդ ու կնիկ կկռուեն, իսկ ծառան կմնայ.
(Պիտի ծիծաղում է և գնում):

ՏԵՍԻՍ ԺԱ

ՄԱՐԻԱ յետոյ ԳԼՈՐԳ

ՄԱՐԻԱ

Էս ի՞նչ կնշանակի, չեմ հասկանում. անցեալ օրերը ծածկովիս չկար և մինչև հիմա չէ երեւում, իսկ այժմ շլեւապաս չկայ... Անպատճառ սա մի նշանակութիւն ունի... (Աչքը ընկնում է պարսպաքանդ սեղանի): Է՛ս ինչ է, նախաձաշի պատրաստութիւնը էստեղ են տեսել... նախասննեակում... Էս սորանից բան չեմ հասկանում... էլի մեր ծառայի յիմարութիւնները կը լինին, ինչպէս երևում է կրկին հարբած պիտի լինի... Չէ՛, դուրս պիտի արած. շատ ինքնուզուխ բաներ է անում (խնայում է Բարկացած) Գէորգ... Գէորգ:

ԳԵՈՐԳ, զրփեց:

Նկայ, տիկին (նեղ է ծնունդ): Ի՞նչ էք հրամայում:

ՄԱՐԻԱ

Ո՞չ է քեզ հրամայել, որ սեղանը էստեղ դնես:

ԳԵՈՐԳ

Պարոնը, տիկին:

ՄԱՐԻԱ, զարմացած:

Պարոնը...

ԳԵՈՐԳ

Այո:

ՄԱՐԻԱ, նոյնպէս:

Ի՞նչպէս թէ պարոնը:

ԳԵՈՐԳ

Նորա այսպէս բարեհաճեցին, տիկին:

ՄԱՐԻԱ

Իսկ դո՛ւ էլ կատարեցիր:

ԳԵՈՐԳ

Ի՞նչպէս կարող էի չկատարել, տիկին: Իսկ եթէ դուք կրարեհաճէք դնել տալ իւր տեղը,

նշնպէս պատրաստ եմ կատարելու. կրարեհաճէ՞ք հրամայել: (Պատրաստում է զրահայելուն պէս խնայն հարարի):

ՄԱՐԻԱ, հրամայական ձևով:

Այս ըրպէիս որ իւր տեղում լինի, այս պատրաստութիւնը... Ես չեմ կարող կռօների պէս ապրել: — Այ թէ ինչ կնշանակի կռօ ծընունել, էլի մի իւր պապական նախկին սովորութիւններից է կպել (ժողով) Բայց չէ, բայց չէ, սպասիր Գէորգ, սա կռօցութիւն չէ՛, նորա էս հրամանը նշանակութիւն ունի... Գնա, գնա, Գէորգ, ինչ որ տարար՝ նորէն բեր դիր տեղը — ես բոլորը հասկացայ...

ԳԵՈՐԳ, մի կողմ:

Ի՞նչ տեղն եմ լծել:

ՄԱՐԻԱ

Նա կամենում է ինձ զայրացնել, նա կամենում է ինձ ամեն կերպով ոտնակոխ անել — ես հասկանում եմ: Բայց թող անի՝ ինչ որ կամենայ, թող անի՝ հէնց ինչ ձեռից կգայ — իսկ ես էլ իմ գիտեցածս կանեմ: Կվերցնեմ իմ բերած բաժինքի բոլոր փողերս և Գրիգոր Աբրահամին էլ հետս կտանեմ արտասահման և այ-

նուհետեւ թող լինի, ինչ որ լինելու է; թող
ինքն իրա միտք կրճտորի, թէկուզ խելագարուի
էլ—շատ եմ հոգս անում... Բայց Վրիգոր
Աբրամիչը չեկաւ, մի վերջնական պատաս-
խան չտուեց ինձ... Թէ և հոգ չէ, որովհետեւ
նա ինձ սիրում է, ուղիղ որ սիրում է... Եթէ
ջուրն էլ զցելու լինեմ, նա ինձ չէ չի
ասիլ, նա ինձ հակառակիլ չի, նա իմ մի խօսքը
երկու անիլ չի տալ: Ա՛յ, ինչ ասեմ մի էնտեսակ
տղամարդի—սորապէս խօսմ ինտրիգներ սարքող
չէ, սորա պէս խօսմ բայղուշ չէ... Հա՛, հէնց
հիմա գնամ մի նորա մօտ, Վրիգորիս մօտ,
տեսնեմ ինչ է ասում... (վաղուհի դէպք իւր դա-
տը, Բայց յետոյ, հարեւելելով իւր շէտադոյն չհասնելը, իս-
կոյն հանգստանալու է յետոյնս է դատարան, հանգելով
Գեորգին) Գեորգ, ի՞նչ եղար...

ԳԵՈՐԳ. ներս մտնելով:

Ա՛յ տեղ եմ, տիկին:

ՄԱՐԻԱ

Ո՛ր է իմ շլեպաս, ո՞վ եկաւ տարաւ: Ո՛ր
է Աննան, նա՞ ինչու չի երևում: մի՞ թէ նա
գործ չունի:

ԳԵՈՐԳ

Աննան խոհանոցումն է, տիկին, իսկ շլեա-
պայի համար բարեհաճեցէք լսել ես հէնց

նոր փողոցից եկայ, նախաճաշի համար խաւի-
արը պակասել էր, յանկարծ տեսնեմ մի մարդ
ինձ տեսնելուն պէս շորի տակ մի բան ծած-
կեց, ես նկատեցի այդ, տեսայ էլ որ շլեպա-
կի իսկոյն կասկածանքս սաստկացաւ և նո-
րա վզից բռնելով կանգնացրի, մի երկու ապտակ
էս երեսին, էն երեսին, տեսնեմ վեր զցեց ու
փախաւ: Շատ աշխատեցի բռնեմ ու ուղիղ Պօ-
լեցէն քաշ տամ, բայց փախաւ ես էլ վեր կա-
լայ շլեպասն ու բերեցի տուն մի փոքր ծալ-
ծլուել էր, տիկին, բայց ուղիղը շատ հեշտ է:

ՄԱՐԻԱ, դարմացած:

Ա՛յ աւագակ, էդ ե՞րբ է մտել ներս:

ԳԵՈՐԳ

Չեմ հասկանում, տիկին, բայց երբ ես նո-
րան ետխալամիշ արի ու մի քանի վեր տուե-
ցի, յետ դառաւ այս երեսիս մի այնպէս թարս
կպցրեց, որ թարսուեցի: Ահա, բարեհաճեցէք
նայել՝ զի ու տեղը կարմրած կլինի, իսկ իմ կար-
ծիքով կսպառած էլ պիտի լինի:

ՄԱՐԻԱ

Բայց ո՞վ էր, չկարողացար ճանաչել, կամ
հիմա տեսնես կճանաչե՞ս թէ չէ...

ԳԼՈՐԳ

Մի տեսակ միջահասակ մարդ էր, չճանաչեցի ես, բայց երեսի գծադրութիւնը լաւ միտս էր գալի, իսկ երբ յետ դառաւ ու իւր այն քարացած դմբուզով փոխարէնը հասցրեց այս երեսիս ու փախաւ, շչմեցի, մինչև անգամ ես ինձ էլ մոռացայ։ Հազիւ վերցրի շլապան ու խաւարը և ինձ տուն գցեցի. թէ այսպէս և թէ այնպէս, արկին, ինչպէս երևումէ տանու գող է, տանու մարդ կլինի բոլոր ճանապարհներ ցոյց ավելը։

ՄԱՐԻԱ, կասկածելով։

Ուղիղ ես ասում, գէորգ, ուղիղ. անշուշտ դորա մէջ տանու մարդի մատ կայ խառը։ Ես հասկանումեմ, էդ իմ մարդի արած ստատնայութիւններն են, էդ բոլորը նուա ցանած սերմերն են, որ այդ մարդիկը հնձումեն թէ այսպէս և թէ այնպէս ես գիտեմ, ինչպէս կփառում դորա փոխարէն։ Գու Նախաճաշից յետոյ կերթաւ Պիերի մադաղները և կբերես մի մեծ չամադան—ես փողը պիտի հեռանամ այստեղից, պիտի գնամ արտասահման. Աննային էլ կասես Նախաճաշից յետոյ դայ, պատրաստութիւնս տեսնի— հասկացար։

ԳԼՈՐԳ

Ինչպէս չէ արկին (թէ չճայած) Ապա ես, ես քնամ անտէր...

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, դու կմնաս պարոնիդ հետ։ Շլեւապարեր տեսնեմ։

ԳԼՈՐԳ

Աննային տուեցի որ դնի ձեր շկաֆը, այնտեղ կլինի։

ՄԱՐԻԱ

Հա, դնամ մի տեսնեմ ինչ օրնէ ընկել։ Ա՛յ աւազակ։

ԳԼՈՐԳ

Տիկին, բարեհաճեցէք մնալ. Նախաճաշը պատրաստ է։

ՄԱՐԻԱ, գնալով։

Լա՛ւ, գալիս եմ, դու գնա բայդուշ պարոնիդ էյնչիր (գնումէ)

ԳԼՈՐԳ

Այս րոպէիս (գնումէ)

(Ավումէ կուխի ետեից Գէորգի ձայնը)։

Նախաճաշը պատրաստ է։ (Թեպէ՛ս Միկոյիլ Եփ)

բէլէ չափը) Դնա, գալիս եմ, (նէրս է հոնում
Գեորգը)

ԳԵՈՐԳ

Թրիկոցը հիմա պիտի դուրս գայ: Տեսնենք
ինչպէս կ'ըլլանայ. կամ հէնց էստեղ պիտի
բռնուեմ, կամ թէ չէ ..

ՏԵՍԻՆ ԺԲ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԵՉ ԳԵՈՐԳ և յետոյ ՄԱՐԻԱ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԵՉ, ներս է մտնում մի լրագիր ձեռքով:

Դէ համեցէք, դէ համեցէք պար եկէք մի
անխորժ կնկայ թուխակի տակ... համեցէք
նախաճաշ արէք տան նախասենեակում... Գան-
կարձ տուգիրից մէկը ներս մտնի, ի՞նչ կա-
սի... չէ՛ որ կ'ըլլի ու առանց պատճառ իմա-
նալու յետ կ'դառնայ: Դէ արի մի՛ բարկացիր,
արի զսպի քեզ... Ինչպէս երևումէ սորա հե-
րանց սանը հէնց միշտ նախասենեակում են
հաց ուտում... Զէ՛, կ'ընեմ, տեսնեմ բանը որ-
տեղ է դադարում (Գեորգին) Գնա տիկինիդ էլ
կանչիր է՛, ի՞նչես գումշի պէս մխուել է դտեղ:

ԳԵՈՐԳ

Նորա հիմա կգան: Ես նոցա յայտնել եմ:

ՄԱՐԻԱ, ներս է մտնում: Երկոցուց աչքերը շատ վառ
հանդիպում են իրար:

Ուրեմն պարոն այսուհետև նախասենեակում
պիտի հաց ուտացնէք:

ԳԵՈՐԳ, առանձին:

Վա՛յ, վայ, ինչ վատ սկսեցին... (Դուրս է
գնում):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԵՉ, առանձին:

Դէ համեցէք, ի՞նչ էք ասում... իր արածը
ինձ վերայ է գցում որ անպատճառ մի վէճ,
կռիւ ընկնի... Ինչպէս երևումէ նա էլ այս-
տեղ է... (Գնում է խորհի դուռը Բայ է ասում ե-
նայում ալ ե չափ, յետ գալով) Զէ՛, մարդ չկայ...
հա՛, ինչ ասացիք տիկին...:

ՄԱՐԻԱ

Ի՞նչ պիտի ասեմ, մի՞թէ դուք ձեր արածը
չգիտէք...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԵՉ

Իմ արածը, ի՛մ արածը ասումէք տիկին,
յետոյ չէք ամաչում... Գեռ ես չէք պատկա-
ռում...

ՄԱՐԻԱ, բարձր:

Ե՛ս պիտի պատկառեմ, ամաչեմ... ամեն
խայտառակութիւն ինձ ճութացնելու համար

տրեցիր, ամեն օր շարմանկա ածող բերել տուեցիր, ածել տուեցիր (այս բոլոր խօսքերն յեղոյ Միկայել եգիպտաց զարմայան չի ե ընդունում)։ Մածկովիս ու շլեպապս գողանալ տուեցիր, չեմ իմանում թէ ինչ օրիններ զուլիս հանեցիր ու հիմայ բերելիս ինձ ու այստեղ ետ նախաճաշ անել տալիս, բաւականէ, ամօթէ... մի տնօգնական կնոջ հետ այդպէս չին վարուիլ։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Դէ հիմա ի՞նչ էք ասում սորան, դէ արի ու հոգի հաւատ բեր զիմանայ, աօ աօ... (Գեորգի նորէն դռնու թոյ է անում, որ իմանայ որքե՞զ ոնցայտ վրան էլած է Սէ չէ ե նորէն վերադարձումէ)

ՄԱՐԻԱ

Ի՞նչ էք շուտ շուտ դուրս նայում, կամենումէք վկայ կանչել... կանչեցէք, կանչեցէք որքան կամենաք, արդարութիւնը իմ ետեւիցս է։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, բարկացած։

Ըհը, էս էլ նոր խայտառակութիւն. ի՞նչ էք ասում տիկին այդ ընչեր էք ասում, տիկին, բաւական չէ՞ ձեր արածները ու հիմայ նորէն ու գումէք ինձ բորբոքել, մի փոքր զոնէ խնայե-

ցէք, անգո՛ւթ... (առանցին, բարկացած) Ուղիվ է ասած, որ կանայք քարասիրտ են...

ՄԱՐԻԱ

Սպասեցէք, ասացէք խնդրեմ իմ արածներս, թուեցէք զոնէ մի երկուսը... էլ ի՞նչ էք փայտի նման կանգնել։

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ, մի կողմ։

Ըհը... էս էլ քեզ նոր անպատվութիւն (նորան) Այ անխիղճ, քո արածները ինձ վերայ ես կոտորում. ինքդ ամեն օր շարմանչ չիկին կանչում ես ու ինձ վերայ ես ձգում (աճե՞ խօսքն յեղոյ Մարիան զարմայան չի ե ընդունում) ինքդ խալաթս ու պալտօս գողանալ ես տալիս, ու հիմայ ինձ վերայ ես ձգում, դու ինքդ ծածուկ մարդիք ես այստեղ ման ածել տալիս, որ դատաստանում քեզ վկայ կանգնեն ու հիմա ինձ վերայ ես ձգում... Այսօր էլ ինքդ հրամայել ես խեղճ ծառային, որ անպատճառ այստեղ լինի նախաճաշը ու հիմա անամօթաբար ինձ վերայ ես ձգում... Թո՛ւհ թքեմ ես քեզպէս կնոջ վերայ...

ՄԱՐԻԱ, վերին աստիճանի բարկացած։

Թքիր քու հօրն ու մօր ու քու կոծ պապերի ու ազգու տակի վերայ, պարօն։ Իսկ ե-

Թէ կամենումես, որ պարզն իմանաս, ծառան
այստեղէ կանչենք ու հարցնենք...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, նոյնպէս

Կանչենք և ով որ մեղաւոր լինի մի պինդ
թքենք երեսին... Գէորգ...

ՄԱՐԻԱ

Գէորգ...

ԳԷՈՐԳ, ներս գալով

Հրամայեցէք, (տառնչին) Ա՛յ, ա՛յ, տառնա
քանդուեց...

ՄԱՐԻԱ

Գէորգ, պարզն ասա...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, մէջ ընկնելով

Սպասիր ես հարցնեմ, դու մի խօսա...

ՄԱՐԻԱ

Չէ՛, ես կհարցնեմ, ուղղումես որ... չէ ես
պիտի հարցնեմ:

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Լաւ, լաւ, դու հարցրու: Գէորգ, ուղիղն ասա,
որ ուղիղն ասեմ՝ լաւ փող կրաշխեմ, մի վա-
խեցիր:

ՄԱՐԻԱ

Է՛ հիմա փողի անուն տուցիր ի հարկէ
նա ինձ վերայ կցի...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Նպոված լինեմ թէ ես այն մաքով փողի ա-
նուն տվեցի որ քեզ վերայ գցի... Գէորգ, յա-
նուն Աստուծոյ...

ՄԱՐԻԱ

Լաւ, լաւ, ասա տեսեմ Գէորգ, քեզ ո՞վ հը-
րամայեց որ նախաճաշը այստեղ պատրաստես.
ասա՛, պարզն ասա... (նա բռն չի տառն): Թէ
ես եմ ասել՝ ասա, թէ սա է ասել՝ ասա:

ԳԷՈՐԳ

Է՛ Է՛... պարոն ու տիկին ի՞նչ բանի ետեից
էք ընկնում կերակուրը ստուց, զնամ բերեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Չէ՛, սպասիր, մի գնալ. ուղիղն ասա, որ ու-
ղիղն ասես, ես քեզ մինչև մահդ իմ տանը կը-
պահեմ, ասա պարզը:

ՄԱՐԻԱ

Ելի կաշառք:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Կաշա՞նքս որն է, ես այդպէս գոնէ պիտի ա-
սեմ որ ուղիղն իմանա՞նք, թէ չէ:

ՄԱՐԻԱ

Էլ ինչ ես կանգնել Գէորգ, ասա՛, պարզն ա-
սա է՛լի, քո վիզը խօմ չենք կտրելու, ես եմ
հրամայել թէ նա:

ԳԵՈՐԳ

Գէ տիկին շատ էք դուք էլ բանի ետեւից ընկ-
նում կամ նորա են ասել, կամ դուք էք ասել:

(Այդ միջոցին երբ ասաց «կամ նա է ասել», Մարիան
ասումէ Միխայիլ եգորիչին «Այ, իսկ երբ Միխայիլ եգորիչը
լսումէ «կամ դուք էք ասել», ասումէ Մարիային «Այ»)

ՄԱՐԻԱ

Չէ, դորանից բան դուրս չեկաւ...

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այ մարդ մի պարզն ասա թէ չէ...

ԳԵՈՐԳ, իբր բարկացած:

Թէ որ այդպէս է, ես եմ արել պրծա՞նք...

ՄԱՐԻԱ

Տօ ուղիղն ասա... մեղա քեզ տէր Աստուած...

ԳԵՈՐԳ

Կերակուրը սառեց... գնում բերեմ (բռնա՛ս է
4 նստ):

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Չէ՛, չի ասում, սորանից բան չի կարելի ի-
մանալ, բայց թէ այսպէս և թէ այնպէս՝ ես
մի չնչին կնոջ խօսքի տակ չեմ մնալ, ես իմ
գիտեցածս կանեմ...

ՄԱՐԻԱ

Ես էլ իմ գիտեցածս կանեմ, տեսնենք ով
կփոշմանի:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Շատ բարի, տեսնենք:

(Երկուքն էլ շատ բարկացած նստում են նախաճաշ առե-
լու. մէկը նստումէ սեղանի այս կողմը, մէկը այն. Միխայիլ ե-
գորիչը, կամենալով չտեսնել իւր ամուսնոյ երեսը, գինու շի-
շը մօտ է դնում իւրեան և լրագրի կէտը պարկայնելով սե-
ղանի վերայ, իսկ միւս կէտը կանգնացնելով, ի հալկէ դէմ
տուած շին, սկսումէ ուտել և կարդալ և այսպիսով լրագիրը
պատճառ է լինում Միխայիլ եգորիչին չտեսնելու նորա երե-
սը: Այս նկատումէ և հասկանումէ Մարիան. նա էլ նորա
փոխարէն գիտութեամբ վերցնումէ գինու շիշը, գինի ամելով
իւր բաժակի մէջ, խմումէ: Ի հալկէ երբ նա շիշը վերցնումէ
լրագրի մի մասն էլ է վայր բնկնում սեղանի վերայ. Միխայիլ
եգորիչը շատ վատ նայումէ Մարիայի երեսին և վերցնումէ
ճիւղի շիշը ու լրագիրը նորէն դէմ տալիս: Մի փոքր յետոյ Մա-

րիան դարձեալ վերցնում ջրի շիշը և ածում է իւր բաժակը ջուր — լրագրի մասը վայր է ընկնում սեղանի վերայ: Միխայիլ եզո-
րիչը առաւել ևս բարկացած նայում է նորա երեսին և կըրկ-
նում է իւր արածը մօտեցնելով քայքայի, խարդալի, բիրաւի
պրիբորը: Մարիան նոյնպէս վերցնում մի փոքր յետոյ
այդ քրքորը և քայքայ է ածում իւր ամանը: Լրագիրը
վայր է ընկնում: Այստեղ երկուցունց աչքերը շատ վատ և
բաւականին երկար ժամանակ հանդիպում են իրար: Միխայիլ
եզորիչը այլ ևս ուրիշ բան չգտնելով ակամայից ստիպւած պար-
տաւորում է ձախ ձեռով բռնել լրագիրը և աջ ձեռով ուտել:
Անցնում է միջոց: Մարիան վեր է կենում տեղից գնում է իւր
սենեակը և խկոյն վերադառնում է, բերելով մի այլ լրագրի
համար, և մօտեցնելով ջրի շիշը իւրեան, անում է այնպէս լինչ-
պէս մի փոքր առաջ իւր ամուսինն արտա, ի հօսկէ կամենա-
լով ցոյց տալ որ նա էլ նորա հետը չի կամենում տեսնել:
Այդ նկատում է Միխայիլ եզորիչը: Վերցնում է ջրի շիշը և ջուր
է ածում: Մարիան մօտեցնում է զինու շիշը — այդ է վեր-
ցնում Միխայիլ եզորիչը և զինի է ածում: Տիկինը մօտեցնում է
իւրեան պրիբորը նոյն նպատակի համար, բայց մի փոքրից
յետոյ այդ էլ է վերցնում: Այս միջոցին նորէն երկուցունց
բարկութեամբ վառուած աչքերը բաւականին ժամանակ հան-
դիպում են իրեար: Տիկին Մարիան խկոյն վեր է կենում
տեղից, կիսատ թողնելով նախաճաշը և վայր դրելով տակի
աթոռքը, շտապու գնում է իւր սենեակը: Միխայիլ եզորիչն էլ
է վեր կենում, կամենալով գնալ իւր սենեակը, բայց յանկարծ
դռան բաց լինելը կանգնացնում է նորան:

ՏԵՄԻՆԱԼ ԺԳ

ՄԻՒՄԱԼԻ Ե ԳՈՐԻՉ, միայն:

ԸՏԸՐ եկա՛ւ, եկա՛ւ (ճանաչում) փայտս ուր է,
փայտս... ահա (գտնում է և գնում է խորքի դռան
չափ չափում է անգիւղում, չէտին պինդ բռնած փայտը

և անէն թէ վայրէշանում սպասելով լէ՛հ Եւրա պինդ Գա,
անցայտ վիշտ) Մարդ չկայ, սխալուեցի... Հա,
այսպէս պիտի անել (դռանը համայ ծածկում է և
անում է գառաւոր ձէ՛լ Եւր ձէ՛լ Մարիայի չափում) Այո,
այս բոլորը քո՛ արածն է, դո՛ւ ես ինձ հետ
այդպէս վարվում... (չափում է չափում) Ձէ՛
ասա տեսնեմ, ո՞վ է շարմանկա ածողին ամեն
օր կանչում... (Եւր չափում) Ես եմ կան-
չողը, թէ՛ դու (չափում է չափում) Ո՞վ է
ծածկովիս ու շլեւապէս գողանալ ափողը: (Եւր
չափում) Իսկ իմ խալաթը ու պալտոն ով է դո-
ղանալ տալիս, տիկին: (Կանայի չափում) Ո՞վ է ա-
մեն անգամ ինձ զգուցանում: (Եւր չափում) Դէ՛,
դէ՛, զըռիս մի տար ասումեմ, թէ՛ չէ՛ ինչ որ
չես տեսել այն էլ կտեսնես: (Կանայի չափում) Ը՛հ
թքեմ ես քո վերայ էլ քո արածի վերայ էլ
(Եւր չափում) Ախ դու անպիտան, դո՛ւ համար-
ձակուես իմ վերայ թքել (Խնամ է պատելին) այ
քեզ, այ քեզ (չափում է չափում) այ այ այ, հասե՛ք,
օգնեցէ՛ք: (Եւր չափում) ձայնդ կտրի՛ր (շարունակում է
լիքել այս և այն կողմ) Աստուած սիրողը հասնի,
գէորդ Աննա... (Այս միջոցին Մարիա Եւր է հար-
նում Գրիգոր Աբրահամը և Միխայիլ եզորիչը վառուած
Եւր բարկութեամբ, հասնում է սորան թէ՛, երէ՛ւ...) հա-
ղիւ եկա՛ր, այ քեզ, այ քեզ դէ՛ գնա այս էլ վկայիր...

ՏԵՍԻՆ ԺԳ

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, ստանալով հարուածը

Միխայիլ Եգորիչ, ես եմ, կամաց է ուժ... ուժ...
Ի՞նչ վկայութիւն... ախար ի՞նչ եմ արել (օէր է
հարած Գէորգը) :

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ա՛խ Գրիգոր Աբրամիչ, (Գրիգորի և Գրիգորի
Գրիգորի) ա՛խ Գրիգոր Աբրամիչ, ներողութիւն,
եղբայր այնքան բարկացած էի, որ չեմացայ թէ
ու՛մ հետ զործ ունէի: Գրիգոր Աբրամիչ, ներո-
ղութիւն, Գրիգոր Աբրամիչ...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, մէջքը բռնելով:

Ուժ, ուժ, մէջկս ջարդեցիր, նոր ներողու-
թիւն... օյ օյ օյ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Գրիգոր Աբրամիչ, հոգիս, չնկատեցի որ դու
ես, հաւատացիր...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, մէջքը բռնելով

Օրհնած, խրոմէիր մի փոքր կամաց զոնէ
խրէիր... չէիր խմանում որ ե՛ս եմ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Այդէ որ չէի խմանում է, խմանայի այդպէս
կանէի՞...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Ես որ ներս մտայ ախր մարդ չկար, ո՞ւմ էիր
այնքան ծեծում...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ել ինչ ասեմ եղբայր, կինս ինձ այս տեղն է
հասցրել:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Ի՞նչպէս ..

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ել ի՞նչն ինչպէս, ինչ որ ձեռից զալիս է՝ խը-
նայում է գոնէ՞...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Ես բան չեմ հասկանում:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Եղբայր, ամենայն օր շարմանկա ածող է կան-
չում ու մեր այս լուսամուտի տակ ածել ու
երգել տալիս, պալտօս ու խալաթս է գողանալ
տալիս...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Այդպէս բան ինչպէս կարող է լինել Միխայիլ Եգորիչ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Հաւատացնումեմ քեզ. այ, մեր Գէորգին չեն ծեծել, երբ նա գողացողին Պօլիցիա է կամեցել տանել... Յետոյ երբ ես տեսել որ նախաձեռնում անեն, երբ ես տեսել — այս էլ նորա հրամանն է... միւսը, միւսը, ո՞ր մէկն ասեմ...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Բայց...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Միայն ես քեզ խնդրումեմ. դու իրան խորհուրդ տուր որ այդ տեսակ բաներից ձեռք բաշի, ապա թէ ոչ ես ինչ որ ունեմ չունեմ կը վերցնեմ, կերթամ արտասահման եւ իմացած կաց որ ես արդէն վճռել եմ այդպէս անել, եթէ միայն վերջ չտայ իւր այսպիսի վարմունքներին ու այնուհետեւ զղջաւ էլ վերադառնողը չեմ:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, առանձին:

Ըհ... սա էլ արտասահման, աչքս լոյս...

ԳԷՈՐԳ, գնալով մի կողմը:

Վայ վայ, սա էլ արտասահման... բան թարսուեց... Հիմա ուրիշ հնարք է հարկաւոր...

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Որ մեռնի էլ չեմ վերադառնալ այնուհետեւ, այդպէս է, իմ վճիռս այդ է:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, առանձին:

Արտասահմանը լաւ մարդ ու կնկայ փախելու տեղ է դառնել:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Այդպէս... խելք ունի թող դադարի, բաւական է, խնդրումեմ քեզանից. իրան ասա, հասկացրու բանի էութիւնը, կակղացրու նորան, ամաչացրու, իբրեւ եղբայր ես քեզ յանձնումեմ...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, առանձին:

Աչքս լոյս... Նա' ինչ է ինձ առաջարկում, սա ինչէ առաջարկում: Հիմա էս քոթակը ինձ արժէ՞ր, թէ չէ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Հասկացա՞ր, Գրիգոր Աբրամիչ... խնդրումեմ, ասա որ ինձ էն տեղը չզցի...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ

Շատ լաւ, աչքիս վերայ, բայց դու ինձ մի
ասա տեսնեմ, այն ծեծը ինչ կնշանակէր:

ՄԻԽԱԻԼ Ե ԳՐԻԳՐ

Ինչը...

ԳԼՈՐԳ

Քոթակը, քոթակը... Ինչքան խելքիս զոր
եմ տալիս ոչինչ չեմ հասկանում:

ՄԻԽԱԻԼ Ե ԳՐԻԳՐ

Կասեմ, բոլորը կասեմ, միայն դու հէնց հի-
մայ դնա, նորա հետ խօսիր. ես քեզ բոլորը կը-
պատմեմ: Ինձ հէնց հիմա հաշտութեան լուր
բեր. ես սպասում եմ: (Գնում է)

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ, միայն:

Ա. յի քեզ օյին... դա չլինի իմացել է որ ես
իւր կնոջ հետ ծածուկ դործեր ունեմ ու դո-
րա համար... ջէ, երբ ես մտայ՝ նա հէնց ծե-
ծումէր մէկին, բայց չեմ հասկանում թէ ով
էր: Թէ այսպէս և թէ այնպէս ինձ կպատմի,
իսկ ես հիմա գնամ Տիկին Մարիայի մօտ և յայտ-
նեմ իմ վերջնական կամքս: (Կախում է Գնում է, բայց
Մարիան հագնում է շէտրոն գլխին, դնում է չեւիս,
դուրս է գալիս)

ՏԵՍԻՆ ԺԵ

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ և ՄԱՐԻԱ

ՄԱՐԻԱ, քնքշաբար նախադիմելով:

Ախ, Գրիգա ջան, ի՞նչ եղար, ես քեզ մեռայ
սպասելով, հէնց հիմա գալիս էի քեզ մօտ, որ
իմանամ քո միտքը... Արդէն համաձայնած պի-
տի լինես, չէ՞:

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ

Յաւօք սրտի կամենումեմ ձեզ յայտնել տի-
կին, որ չեմ կարող:

ՄԱՐԻԱ, զարմացած:

Ի՞նչպէս

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ

Այնպէս որ տիկին, շատ դժուար առաջար-
կութիւն է դա, ապա իմ գործերս ինչ անեմ:

ՄԱՐԻԱ, կոտորած:

Այդ քեզանից ես չէի սպասում...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻՉ

Ես այդ հասկանումեմ, տիկին, բայց իմ դը-
րութիւնը... այսինքն ես (սասնջէն) ինչպէս ա-
սեմ որ լաւ լինի... (նորան) բայց...

ՄԱՐԻԱ, նեղացած:

Բաւական են ձեր բայցերը... դուք իմ վիզս ծռեցիք, ես ձեզ վերայ մեծ յոյսեր ունէի... դուք ինձ ամեն կերպիւ խաբեցիք... դուք ինձ հետ վարվեցիք ինչպէս մի շարլատան...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Ես մեղաւոր եմ տիկին, բայց... պիտի մի փոքր դուք էլ հասկանաք իմ զրուծիւնը...

ՄԱՐԻԱ

Բայց, իմ զրուծիւնը... բայց... իմ զրուծիւնը... ահա ձեր անկապ նախադասութիւն կազմող բառերը... Այսօրէն իսկ ես հեռանում եմ ձեզանից... ուրեմն մնաք բարեալ... ես միայն կարող եմ գնալ արտասահման... (գնում է Գրիգորի խոր դռանը):

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Տիկին, սպասեցէք, մի երկու խօսք ես...

ՄԱՐԻԱ, կանգնած իւր դռան մօտ

Ի՞նչէ, ի՞նչէք կամենում ասել... փոշմանեցի՞ք, կամենում էք ինձ հետեւել...

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ

Ոչ, տիկին... այսինքն... բայց...

ՄԱՐԻԱ

Դարձեալ բայց... մնա՛ք բարով... (Խորհրդած չորհրդամէ իւր երեսից դռանը եւ անյայտանում է):

ԳՐԻԳՈՐ ԱՅՐԱՄԻԶ, ձեռները տրորելով:

Չէ՛, լա՛ւ վերջացաւ... կտրվեց մեր բարեկամութիւնը... և շատ լաւ եղաւ, այլ ես ինձ ի՞նչ հարկաւորութիւն, երբ այստեղ մնալու չէ՛... հը՛... հա՛, ուրեմն НА ЛЕВО ПРУГОМЪ, МАРИЯ!... (գնում է շրայտի, անցնում է փոքր թշուղի, ներս է յորհում Միխայիլ Եփրէմը):

ՏԵՍԻԼ ԺԶ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ յետոյ ԳԵՈՐԳ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ, միայն:

Գրիգոր Աբրամիչը այստեղ չէ՛... Մի գուցէ դեռ ես Մարիայի սենեակումն եմ... Ես շատ կաշխատի հաշտացնելու համար, գիտեմ... բայց միթէ մինչև այժմ չեն վերջացրել իւրեանց խօսակցութիւնը... հը՛... (կանչում է ծառայի) Գէորգ...

ԳԵՈՐԳ, ներս մտնելով:

Հրամայեցէ՛ք...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Գրիգոր Աբրամիչը տիկնոջը մօտն է՛...

ԳԵՈՐԳ

Ո՛չ... պարոն, նոցա մօտ մարդ չկայ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ապա ո՛ւր է նա...

ԳԵՈՐԳ

Նոքա բաւականին միջոց է որ գնացել են:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ի՞նչպէս թէ գնացել... նա ինձ պիտի պատասխան բերէր... Հա՛... տիկնոջդ հետ տեսնուեցա՞ր...

ԳԵՈՐԳ

Այո՛,

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ինչի՞նք վերայ էին խօսում: Հասկացա՞ր թէ չէ՛...

ԳԵՈՐԳ

Ոչ, պարոն ես իմ սենեակումն էի, բայց մի փոքր բարկացած իրար հետ խօսացին խօսացին և հեռացան:

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Մի երկու խօսք գոնէ չհասկացա՞ր

ԳԵՈՐԳ

Բոլորովին... ես մի՞ թէ իրաւունք ունեմ՝ նոցա խօսակցութիւնը լսելու:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Լաւ, ես հասկացայ... (սառնակ) Ինչպէս երևումէ Գրիգոր Աբրամիչը շատ է համոզել, բայց բան գլուխ չի եկել և շատ բարկանալուց յետոյ՝ թողել, և այլ ևս չկամենալով ինձ վրշտացնել, գնացել է... Ահա ինչ կնշանակի մաքուր սիրտ ունեցող բարեկամ և ուղիղ որ բարի կամեցող է նա ինձ... ուղիղ որ սերտ սէր և մաքուր սիրտ ունի նա դէպի ինձ... Խեղճ մարդ... Ի՞նչ արած... մի չար կնոջից ստիպուած պարտաւորուած եմ հեռանալ և նորանից... (Տառնալիք եւ ձայն) Հա՛... Գէորգ, այս ըոպէիս կգնաս Պիերի մազազները և մի ամուր և մեծ չամադան կբերես ինձ համար, հասկացա՞ր... ես վաղը գնումեմ արտասահման...

ԳԵՈՐԳ, խեղճ խեղճ:

Պարոն ապա ե՞ս... ե՞ս ինչ անեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, մտքով մոլորուած:

Է՛հ... քեզ ինչ... որտեղ որ լինի դու քեզ համար կապրես... կամ տիկնոջդ մօտ կմնաս...

ԳԷՈՐԳ

Ինչպէս կը արեհաձէք, պարոն... (առանցին)
Չէ, պիտի սրանց հաշտացնել, թէ չէ տունս
կ'ընդունի (չափեցումէ Գեորգ) ...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Հա՛. . տիկինդ ո՞րտեղ է...

ԳԷՈՐԳ

Իւրեանց սենեակում պարկած են, պարոն...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Պարկած... ինչո՞ւ է պարկած...

ԳԷՈՐԳ

Շատ վատ տկարացաւ նոր, պարոն: Աննան
շուտ շուտ ջուր է աւելիս երեսով... սիրտը զը-
նումէ, պարոն...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Ինչպէս թէ... ախար նոր առողջ էր...

ԳԷՈՐԳ

Գրիգոր Աբրամիլը հէնց գնաց թէ չէ՝ նորա
այս օրն ընկան, պարոն...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Նա գիտէ՞ որ ես արտասահման եմ գնում:

ԳԷՈՐԳ

Նոցա խօսքերից երևաց որ գիտեն:

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Ի՞նչ խօսքեր... Ի՞նչ ասաց...

ԳԷՈՐԳ

Է՛հ... Ի՞նչ և իցէ, պարոն...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Ասա, ասա մի թագցնիլ:

ԳԷՈՐԳ

Ասացին. նա գնումէ արտասահման, ինձ
թողնումէ, ասացին...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Յետո՞յ:

ԳԷՈՐԳ

Յետոյ...

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Ասա:

ԳԵՈՐԳ

Մի խօսքով Գրիգոր Աբրամիչը գնալուց յետոյ շատ փոխուեցին...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այ ինչ կնշանակի ընկեր, սրտակից ընկեր... Մէկէլ պատահեմ նորան՝ ճակատից պիտի համբուրեմ Աստուած վկայ... երևի շատ պինդից է բռնացրել... բայց չի կարողացել համազեցնել... Հա... յետոյ...

ԳԵՈՐԳ

Յետոյ էլ ասացին... բայց չէ՛ ոչինչ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա, ասա, վերջապէս հրամայումեմ...

ԳԵՈՐԳ

Տիկնոջ ականջը կնկնի պարոն... ո՛չինչ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ոչինչ չի ընկնիլ, միամիտ կաց, ասա:

ԳԵՈՐԳ

Միայն, պարոն, խնդրեմ, ի սէր Աստուծոյ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա, ես քեզ ասումեմ մի վախենալ, միամիտ կաց, դեռ ես կպարգևատրեմ քեզ...

ԳԵՈՐԳ

Ասացին որ նա ինձ կամենումէ թողնել. ես որտեղից գտնեմ նորանից լաւ մարդ, ասացին...

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Յետոյ:

ԳԵՈՐԳ

Յետոյ էլ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա, ինչ ես վախենում, ուղիղն ասա՝ ես քեզ չեմ մոռանալ:

ԳԵՈՐԳ

Տիկնոջ ականջը կնկնի, պարոն, յետոյ մի կըտոր հացից էլ կզրկուեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Օ՛հ, ինչ անասուն է... ես քեզ ասումեմ մի վախենալ, ես քեզ մինչև մահդ ինձ մօտ կըպահեմ, միամիտ կաց:

ԳԷՈՐԳ

Մէկէլ այս ասացին որ՝ կերթամ, ասացին, և կ'մտնեմ կուսանաց վանքը, եթէ նա թողնի և հեռանայ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԴ, բոլորովին կակղած:

Ա՛խ, իմ հրեշտակ Մարիա ջան, իմ կեանքի սի՛ւն Մարիա ջան, ես... ես քեզ այլ ևս չեմ թողնիլ... ես յաւիտեան մոռացայ... (Տրտմամբ) Ես լաւ գիտեմ որ իմ կինը վատ չէ, բայց թէ ինչ սատանա էր մտել նորա սիրտը այս քանի օրուայ մէջ—չգիտեմ... Գէորգ, էլ չգնաս Պիեռի մագազինը, Պիեռի հայրն եմ աշիծել, էլ հարկաւոր չէ չամադանը... ես մնացի... ես մնացի (Գնալով դէպի իւր սենեակը) իմ նազելի Մարիաիս մօտ (Դռնումով դէպի իւր չէմ նոյն դռանը՝ օդային համէպը է ուղարկում նորան եւ հանում է իւր սենեակը):

ՏԵՍԻՆ ԺԷ

ԳԷՈՐԳ, միայն:

Էս շատ լաւ եղաւ... այ թէ տիկինիս էլ այսպէս կակղացրեցի հա՛... So նա էլ կկակղի, աս նրա հայրն ու մայրն էլ կկակղեն, աս

դեռ նրա պապ ու տատն էլ պար կգան իմ թուխակի տակ... ա՛յհո՛ւ... Է...

ՏԵՍԻՆ ԺԱ

ԳԷՈՐԳ և ՄԱՐԻԱ

ՄԱՐԻԱ, ներս է մտնում նօթերը կիտած:

Հը՞, չամադանս բերեցիր...

ԳԷՈՐԳ

Ո՛չ, դեռ տիկին, հիմա գնումեմ, հազիւ թէ գործից թեթեացայ (սասնային) շատ մի կտոր կտոր զալ — կկակղես:

ՄԱՐԻԱ

Ա՛խ, ինչպէս դու անտանելի ես ինձ: Ի՞նչ չո՛ւ չես կատարում այն՝ ինչ որ քեզ հրամայեա՞ծ է:

ԳԷՈՐԳ

Ներողութիւն տիկին: (Սասնային) ինչ օձի կծածնէ՛:

ՄԱՐԻԱ

Ուրեմն թող գործդ և դնա շուտով Պիեռի մօտ, առանց ուշացնելու մի լաւ չամադան բեր, հասկացա՛ր—չամադանը մեծ լինի:

ԳԵՈՐԳ

Այս բոլորն տիկին, պարոնին ջուր հասց-
նեմ և զնամ:

ՄԱՐԻԱ, շտապաւ և կասկածով:

Ինչո՞ւ համար է ջուրը... խմելո՞ւ...

ԳԵՈՐԳ

Ոչ, տիկին ուշքը զնուժէ: Աննան մօտին է,
կտաւ է ջրով թաց անուժ և զնուժէ զլիւին:

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել...

ԳԵՈՐԳ

Չգիտեմ, տիկին, բայց նախաճաշից յետոյ
շատ փոխուեց պարոնի առողջութիւնը:

ՄԱՐԻԱ

Ինչո՞ւ, ինչո՞ւ, իմացաւ իմ արտասահման
գնալը:

ԳԵՈՐԳ

Այո, տիկին, թէ ասեմ...

ՄԱՐԻԱ

Ասա, ասա շուտով:

ԳԵՈՐԳ, կամաց:

Թէ ասեմ ձեր գնալն էր իսկ պատճառը:

ՄԱՐԻԱ

Ի՞նչ է, բան — ման իմացա՞ր:

ԳԵՈՐԳ

Այո, տիկին... բայց չէ՛, չէ՛, ոչինչ չիմա-
ցայ:

ՄԱՐԻԱ

Ի՞նչ ես ծածկում, ասա, մի վախենալ:

ԳԵՈՐԳ

Այսինքն... նոցամի քանի խօսքերից երևաց որ
շատ են փոշմանել ձեզ հետ այնպէս վարվելու
համար... մէկէլ ասացին...

ՄԱՐԻԱ

Ի՞նչ ասաց, ասա շուտով. ի՞նչ ես կանգ-
նում... մի վախենալ, ես քեզ կվարձատրեմ և
քեզ խոստանումեմ քանի որ կամ՝ քեզ այս
տանից չհեռացնեմ. ասա շուտով ուղիղը:

ԳԵՈՐԳ

Մէկէլ ասացին որ ափսոս իմ Մարիա... ես
որտեղից գտնեմ, ասացին, նորանից լաւը...

ՄԱՐԻԱ

Յետոյ...

ԳԷՈՐԳ

Այն սաստիկ տաքութեան մէջ՝ ամեն լոպէ՛
ձեր անունն էին տալիս... Մի գնա... մի գնա...
ներողութիւն, ասումէին շուտ շուտ:

ՄԱՐԻԱ, խղճալով:

Ի՞նչես ասում... ուղի՞ղ ես ասում... խեղճ՝
մարդ...

ԳԷՈՐԳ

Այո, տիկին, մի խօսք անգամ ինձնից չեմ
աւելցնում... այս էլ ասեցին, տիկին, որ...
բայց չէ, բայց չէ, ոչինչ չասացին:

ՄԱՐԻԱ

Ասա, ասա, Գէորգ, մի վախենալ... ինչ որ
խոստացայ քեզ՝ կկատարեմ անշուշտ... ասա,
է՛լ ինչ ասաց:

ԳԷՈՐԳ

Տիկին, յանկարծ պարոնի ականջը կնկնի ու...

ՄԱՐԻԱ

Միամիտ կաց, խոստանումեմ որ չի ընկնիլ:

ԳԷՈՐԳ

Մէկէլ ինչպէս երեաց՝ մի քանի խօսքերից
կամենումեն ձեզանից յետոյ իւր բոլոր կարողու-

թիւնը տալ վանքի և ինքեանք նորա մէջ ճրգ-
նել. մինչև անգամ այս էլ ասացին, որ ես, ասա-
ցին, վանքին ժամհարութիւն էլ կանեմ...

ՄԱՐԻԱ, խղճալով:

Մի՞թէ... խե՛ճ ամուսինս, խեղճ...

ԳԷՈՐԳ, կամենալով գնալ:

Տիկին, ներողութիւն ջուրը ուշացաւ. ջուրը
հասցնեմ թէ չէ, խկոյն կերթամ չամաղանը
բերելու:

ՄԱՐԻԱ

Ձէ՛ չէ՛ Գէորգ, այլ ևս հարկաւոր չէ, թող
սատանան տանի չամաղանը, այլ ևս ինձ չա-
մաղան պէտք չէ, դու գնա ջուր հասցրու
պարոնիդ. յայտնիլ էլ, որ ես գնալու չեմ...
թող հանգստանայ:

ԳԷՈՐԳ, առանձին, գնալով:

Էսպէս կկակղացնեմ, հա՛:

ՄԱՐԻԱ, միայն:

Խեղճ՝ մարդ, խեղճ... ես ի՞նչպէս անգութ
պիտի լինեմ, որ թողնեմ սորան և գնամ...
(Դաստիարակ Դէպի Միտիւն Նգրիչի Դոտը) Ձէ՛, հո-
գիս, այլ ևս չեմ գնալ, ես քեզ չեմ թողնիլ որ...
9

գնաս ժամհարութիւն անես... ես բողբոլովն
կմոռանամ, հո՛գիս... Գարձեալ դու կլինես ինձ
հարկաւոր, դարձեալ քո սիրտը կցաւի ինձ հա-
մար... Այլոց ի՞նչ փոյթ... ես փորձեցի ան-
պիտան Գրիգոր Աբրամիչին... նորա հետ մի-
այն... Թէ չէ նեղ օրում հասնող չէ... (Ձեռքը
դնելով սրտին) Ա՛խ, ինչպէս սիրտս բաբախում
է... Արդեօք ինչպէս է ամուսինս... իմ Միքա-
յելս... (Տրամուսնով) Հը՛, չգիտամ արդեօք տեսնե-
լու նորան... գնամ, գնամ նորան համբուրեմ
մի ամուսնական պարզ և ջերմ համբոյրով—
դուցէ այս համբոյրը լինի նորա վերքի սպեղա-
նին... (Գնում է դէպի նորա դռանը, բայց հանդիպում է
Տրամուսնի և յետոյ դռանում դէպի իւր դռանը և
հանգնելով այնպէս, երեսը դէպի իւր դռանը դարձ-
րած նորէն Տրամուսնի)։

ՏԵՍԻՆ ԺԹ

ՄԱՐԻԱ և ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ, ներս գալով առանձին։

Ձէ՛, սիրտս չէ՛ համբերում, գնամ մի տես-
նեմ Մարիայիս, գնամ իմանամ նորա որպիսութե-
թիւնը, գուցէ Տէր մի արասցէ, Տէր մի արաս-
ցէ բժշկի կարօտութիւն կայ... Ախ եթէ վատ
վերջաւորութիւն ունենայ նորա տկարութիւնը՝

եւ կցնորվեմ, Աստուած վկայ կցնորվեմ (Գա-
նում է դէպի իւր հնչող դռանը և յանդիմանում է,
նորան հանգնած և Տրամուսնի մէջ) Ախ, այս նա
է, իմ Մարիաս է...

ՄԱՐԻԱ, յետ դռանալով առանձին։

Ա՛խ, ամուսի՞նս... նա ինչպէս երևում է իմա-
ցաւ, որ ես այլ ևս չեմ գնալու արտասահման...

(Այստեղ երկուցունց հայեացքը հանդիպումն իրար։ Սոցա
այս հայեացքից թափում է սիրոյ կրակ, սիրոյ բորբոք, այս
հայեացքից երևում է որ ամենայն բան մոռացված է, կար-
ծես թէ բողբոլովն եղած չէ ոչինչ, կարծես հանդիպումն
երկու մատաղ և զեղեցիկ սիրահարներ, որոնց քնքոյշ, ջերմ
սիրալիք հայեացքից, թափվում է սրբութիւն, մաքրութիւն և
պալիւ Աստուածահաճոյ սէր։ ՏԵՍԻՆԱՆ։)

ՄԱՐԻԱ, քնքաբար։

Ի՞նչպէս ես զգում քեզ, Միխաիլ ջան։

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ, մօտենալով

Ոչինչ, լաւ եմ, դո՛ւ ինչպէս ես զգում, ասա։

ՄԱՐԻԱ, նայնպէս։

Նայնպէս լաւ եմ, ամուսինս... բայց դու
տկարացած չե՞ս...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ձէ՛։ Իսկ դո՛ւ

ՄԱՐԻԱ, զարմացած:

Նոյնպէ՛ս:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Վա՛... (ստանցին) խեղճ... Թաղցնումէ:

ՏԵՍԻԼ Ի

ՆՈՅՆԵ Է ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

ԳՐԻԳՈՐ ՄԲՐԱՄԻՉ, առանձին:

Գնումէ զնա, թէկուզ ջահանգամբ զնա,
բայց զորանից առաջ մի լաւ Միխաիլ Եգորիչի
տակը լցնում իմ միտքս ուրիշ է: Այս էլ ա-
նեմ ու մնաք բարեւ (համեմատէ գնալ Միխաիլ Եգո-
րիչի սենեակը՝ Բայց յանկարծ նկատումէ նոյա միտքին
համեմատ իս հաղցի հայեացքի իս խոսակցութեան մէջ):

ՄԱՐԻԱ, քնքշաբար:

Ուրեմն դու բոլորովին առողջ ես...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Այո, առողջեմ, բայց մի փոքր զլուսս ցա-
ւաց:

ՄԱՐԻԱ, առանձին:

Թաղցնումէ... ինձնից տկարութիւնը:

(Գրիգոր Աբրամիչը կամենումէ մտնել Միխաիլ Եգորիչի սենեակը, բայց նկատումէ նորան Մարիան)

ՄԱՐԻԱ, Գրիգոր Աբրամիչին:

Ախ, դուք կրկի՞ն այստեղ, պարոն. առաջար-
կումեմ ձեզ այս ընկերս դուրս գնալ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ախ, Գրիգոր Աբրամիչ... սխալվումես Մարիա
ջան, սա մեր սիրելի Գրիգոր Աբրամիչն է,
դու մի՞գուցէ ուրիշն տեղ ես ընդունում:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Տիկին, ես... բայց... այսինքն...

ՄԱՐԻԱ

Ես շատ լաւ գիտեմ, հոգիս, սորա ով լինելը,
հէնց այդ է պատճառը, որ առաջարկումեմ
սորան դուրս գնալ:

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Ներողութիւն տիկին, ես... բայց...

ՄԱՐԻԱ

Կրկի՞ն ձեր բայցերը... ինչպէս երևումէ դուք
չէ՞ք կամենում գնալ... համեցէք դուրս...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ

Հնազանդումեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, մոլորուած:

Բայց ես բան չեմ հասկանում, Մարիա:

ՄԱՐԻԱ

Դու չես հասկանում... դեռ ևս չես հասկա-
նալ... (Գրեգոր Աբրահեան) Իսկ դուք կրկին այս
տեղ էք... (Հանգիւլ) Գէորգ... Գէորգ...

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՄԻՉ, գնալով:

Ա ա ա գնումեմ տիկին, գնումեմ... ներո-
շուծիւն...

ՏԵՍԻԼ ԻԱ

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, ՄԱՐԻԱ և ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ, ներս մտնելով:

Հրամայեցէք տիկին:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, առանձին:

Այ բա՛ն... մի երկու ժամ սորանից առաջ
խեղձին ես քօթակեցի, իսկ հիմա էլ սա է
դուս անում... (Մարիային) Բայց ի՛նչ կնշանակե-
այդ Մարիա:

ՄԱՐԻԱ

Դու քո մարդերին չես ճանաչում. դու միա-
միտ ես և կարծում ես, որ ամենքն էլ քեզ
պէս են...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Բայց ամենահաւատարիմ բարեկամս, անկեղծ
ընկերս, մի՞թէ չգիտես որ նա էր:

ՄԱՐԻԱ

Գիտեմ, գիտեմ սիրելիս... բայց ինչ որ ես
գիտեմ՝ դու չգիտես... դու գիտես նորան ազ-
նիւ, իսկ ես փորձեցի և գտայ անաղնիւ, դու
ճանաչումես նորան հաւատարիմ, անկեղծ, եղ-
բայրասէր, իսկ ես հասկացայ և համոզուեցի
որ անհաւատարիմ, կեղծաւոր և եղբայրատես
մարդ է նա:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ, զարմացած:

Բայց ի՛նչպէս, ասա խնդրեմ...

ՄԱՐԻԱ

Ասեմ, ասեմ հոգիս, բայց հեռու նմանու-
թիւններով, ասեմ առակներով և զուարճախո-
սուծիւններով. չե՞ս բարեհաճիլ գնանք իմ սե-
նեակս, այնտեղ ես քեզ մի առ մի կբացատրեմ—
բայց կբացատրեմ այնպէս, ինչպէս նոր ասացի:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Դնանք, գնանք...

ԳԷՈՐԳ

Պարոն, տիկին...

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ և ՄԱՐԻԱ

Հը, էլ ինչ:

ԳԷՈՐԳ

Ո՛չէնչ:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Ապա էլ ինչ ես ուզում:

ԳԷՈՐԳ

Մի երկու խօսք եմ կամենում առել ձեզ, միայն խնդրեմ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ և ՄԱՐԻԱ

Ասա:

ԳԷՈՐԳ

Խնդրեմ չնեղանալ և ներել ինձ...

(Միևիկ Նգորիչ և Մարիան առաջ իրար երես են նայում):

ՄԻԱՍԻՆ

Ի՞նչ է, ասա:

ԳԷՈՐԳ

Ես հիմա կամենում եմ աւելի հալալութիւն ու խոհանութիւնով ծառայել ձեզ, նորա

համար թոյլ տուեցէք ինձ յայտնել և խոստովանել իմ մեքղերը...

ՄԱԽԱԻԼ ԵԳՈՐԻԶ

Այդ մեր գործը չէ, մեզ չէ պատկանում, քահանայի պարտականութիւն է այդ:

ԳԷՈՐԳ

Բայց ձեզ է վերաբերում:

ՄԱՐԻԱ

Դէ ասա, էլ ի՞նչ ես մեզ երկու երկու փորացաւ զցում:

ԳԷՈՐԳ

Ձեր միջի կռուապատճառը ես էի...

ՄԻԱՍԻՆ

Ի՞նչպէս...

ԳԷՈՐԳ

Միայն խնդրեմ...

ՄԻԱՍԻՆ

Ասա, ասա:

ԳԷՈՐԳ

Ամեն օր շարմանկա բերել տվողը ես էի, ձեր պալտօ ու խալաթ, ձեր ծածկովի ու շէնք-

պան գողանալ տվողը ես էի, նախաճաշը այս-
տեղ պատրաստողը ես էի... մի խօսքով՝ ես էի,
եւ էի ու ամենն էլ ես էի...

(Միխայիլ Եգորիչը և Մարիան զարմացած և մոլորուած նա-
յումեն իրար երեսի):

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Ա՛խ դու անպիտան կենդանի... մի՞թէ դու
մի փոքր չխղճացիր, և ի՞նչպէս հանգնեցար
դու մեր սէրը և հանգստութիւնը վերգովե...
դո՛ւրս, դո՛ւրս և աչքիս այսուհետեւ չերևալ:

ԳԵՈՐԳ

Ո՛չ, ես ձեր այդ վճռին համաձայն չեմ...

ՄԱՐԻԱ

Ի՞նչպէս թէ...

ԳԵՈՐԳ

Այնպէս որ ես մինչև հիմայ ծառայել եմ
կեղտոտութեամբ՝ ինձ պահում էիք, իսկ հիմա
վարվելու եմ, ծառայելու եմ, ազնվութեամբ՝
հիմա ինձ դո՛ւրս էք անում: (Երկուսն էլ իսկ-
զում են)

ՄԱՐԻԱ

Այ սատանայ:

ԳԵՈՐԳ

Բացի զորանից դուք ձեր խօսքի տէրը չէք:

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ, ժպտով:

Էս էլ նո՛ր խայտառակութիւն:

ՄԱՐԻԱ

Ի՞նչպէս:

ԳԵՈՐԳ

Այնպէս որ մի կէս ժամ սորանից առաջ՝
դուք առանձին, դուք էլ առանձին, խոստացաք
ինձ վարձատրել և պահել մինչև ձեր կեանքի
վերջը, իսկ հիմա վարվումէք բոլորովին հակա-
ռակ...

(Երկուքն էլ ծիծաղում են):

ՄԻԽԱԻԼ Ե ԳՈՐԻՉ

Այդ բաները որ անումէիր, հարբած խօս
չե՞ս եղել...

ԳԵՈՐԳ

Ընդհակառակն, պարոն, մտքիս ամենամա-
քուր ժամանակն եմ ես արել...

ՄԱՐԻԱ

Բայց ի՞նչ էր պատճառը...

ԳԷՈՐԳ

Պատճառն այն էր որ, տիկին, դուք մի երկու շաբաթ սորանից առաջ կամենումէիք ինձ դուրս անել, իսկ ես խոստովանումեմ, տիկին, որ դուրս գնայի ի՞նչպէս կարող էի մի օր կեանք վարել առանց... իմ... Ան... սիրոյ առարկայի:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Ասա՛... դու ուրեմն սիրոյ առարկայ էլ ես ունեցե՛լ—ո՞վ է, ասա, ասա: Ա՛յ որտեղեց է կծիկը բացուել:

ԳԷՈՐԳ

Այո՛ւ պարոն, ես սիրումեմ Աննային և նա էլ ինձ:

ՄԱՐԻԱ

Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ առաջ չէիր ասում:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Տեսէք թէ ինչ հնարներով են հասնում իւրեանց նպատակին... այ նղովուածներ:

ԳԷՈՐԳ

Առաջ ասէի՞... ի՞նչ ասէի, երբ ինձ դուրս անել էիք կամենում —առաջ երեսաստեղ ունէ՞ի որ:

ՄԱՐԻԱ, ծիծաղելով:

Հիմա երեսաստեղդ շատ է՞:

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Չէ՛, Մարիա ջան, պիտի ուշ դարձնել— մի լաւ հասկացիր թէ ինչ հնարներ են: (Պըջ) Թէ որ այդպէս է, կանչիր, Գէորգ, Աննային, բայց իմացիր, որ այս պիտի լինի առաջին և վերջին օրինակը, ապա թէ ոչ զոյշ կաց հա՛... էլ ձեռքիցս չես պրծնիլ:

ԳԷՈՐԳ

Յուսով եմ, պարոն, որ երբէք չպիտի մոռանամ ձեր արած լաւութիւնը, իմ անխոհմ վարմունքի դէմ և ի սրտէ...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Դէ գնա, գնա, շուտ կանչիր Աննայիդ: Գէորգը մօտենումէ դռանը և կանչումէ Աննային, որը և ներս է մտնում:

ՏԵՄԻԼ ԲԲ

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆՆԱ

Միմալի եզրերը և Մարիան աննդհատ ժպտով նայում են նորա երեսին, որն և կարմրումէ:

ՄԱՐԻԱ, Աննային

Ուրեմն դուք էլ էք այդպիսի բաներով պարապում հա՛... ա՛յ անպիտաններ: Եւ եթէ այդպէս բան կար, ինչո՞ւ չէիք ասում, քան թէ մե՛զ, էն էլ մե՛զ էիք կռուացնում:

ԳԵՈՐԳ, չափելով:

Կռուացրեցի էլ—հաշտացրեցի էլ: Ներողու-
թիւն պարոն և աիկին:

ՄԱՐԻԱ

Ուրեմն դուք իրար սիրո՞ւմէք:

ԳԵՈՐԳ և ԱՆՆԱ, միասին:

Այո...

ՄԻԽԱԻԼ ԵԳՈՐԻՉ

Եթէ այդպէս է՝ պատրաստուեցէք վաղը ե-
կեղեցի գնալու, ձեր պսակը լինելու է իմ ծախ-
քով... Բայց զգուշացէք, զգուշացէք ապագա-
յում, ի հակառակ դէպս... (Տապալ հասարակ զը-
նույն Մարիայի հետ նորա սենեակը):

ՏԵՍԻԼ ԻԳ

ԳԵՈՐԳ և ԱՆՆԱ

ԱՆՆԱ, ուրախ:

Բայց պէտքէ ասել, որ դու էլ բարի պտուղ
չես:

ԳԵՈՐԳ, նոյնպէս:

Ինչ անեմ, ինչ անեմ, իմ կոկոմով վարդս,
եթէ այդպէս չանէի ա՛յսպէս կվերջանա՞ր... Բայց
հա, ոնց թէ մոռացայ (վաղուհի իւր սենեակը, իսկ
Ա. նստն էեմ վերայ նայում էր տանուլ լէ էնչ է անում նա):

ԱՆՆԱ

Գէորգ, ի՞նչ բանի վերայ ես, է՛լն արաղն շի-
շը ձեռքիդ:

ԳԵՈՐԳ, կուլտի ետեկց:

Ոչինչ ոչինչ, Աննա ջան, ուզումեմ մի տես-
նել թէ ինչքան է մնացել արաղը...

ԱՆՆԱ

Արի, արի այստեղ մի երկու խօսք ասեմ: (Ներս
է գալիս Գէորգը չեւիւն գիտարա ե մ շիշ տարա)
Ահա ես քեզ ասումեմ, ասումեմ վերջնական
էսքանի մօտ (յոյս ասելով հանդիսանալիս) որ ե-
թէ դու այսուհետեւ պիտի շարունակես գինի,
արաղ խմելը—ես այժմէն իսկ հեռանում եմ:

ԳԵՈՐԳ

Ահա իմ վերջին ուխտս Աստուծոյ, քո և
այսքանի առաջ, որ այսուհետեւ ես զինի արաղ
զործ չեմ դնիլ, իսկ եթէ զործ ածեմ՝ թող Աս-
տուածային անէծքը թափի վերաս—բաւա-
կա՞ն ես:

ԱՆՆԱ, խկոյն և սիրով:

Այ, այ, էդպէս մի ասիլ:

ԳԵՈՐԳ

Բայց մի բան կայ. ես էս մեր ուրախութեան
շնորհաւորէքը չպիտի ձգեմ,—որ երկնքից
հրեշտակ վերգայ, իսկ զժողովրդ ստանայ դուրս
դայ՝ ես էս մէկը (ածելով լրումն) պիտի վայե-
լեմ, պիտի կոնծեմ ու զոռամ. Աստուած շնոր-
հաւոր անի (չալ է ասելիս):

ԱՆՆԱ, սիրով:

Ես էս մէկին իրաւունք ունեւ:

ԳԼՈՐԳ, Երզումէ Դ):

Տէ՛ս. վերջապէս մտածածս՝

Ահա զլուսն բերեցի,

Իմ վաղուցիւն ջերմ փափագս՝

Ես ի կատար հասուցի:

Տուր ինձ ձեռքդ, իմ սիրուհի,

Տուր ինձ սիրով պարզապէս,

Վաղը որ սուրբ եկեղեցում

Մենք միանանք պարզերես:

ՄԻԱՍԻՆ, ձեռ ձեռի տուած

Մեծ չարչարանք և նեղութիւնք

Անցան մեզից, հեռացան,

Քաղցր ժամեր, բարօրութիւնք

Մեզ ժպտով մօտեցան:

Դէ՛, մի համբոյր (համբոյս) և ապա պար

Լինին վկայ մեր սիրոյն

Թող քաղցրաձայն հնչի գիտար

Յանդորրութիւն մեր հողերն:

Մի և եոյն եղանակը, բայց աւելի յորդոր, Գէորգը ա-
ծումէ գիտարի վերայ, մեծ շարժումներով, իսկ Մենան պար է
դալիս: Մի փոքր յետոյ Գէորգն էլ է խառնուում պարի մէջ,
մի և եոյն ժամանակ ածում է գիտարը: ՏԵՍԱՐՈՆ—աշխուժով
պար:

Վարագոյրը կամաց իջնումէ:

(Դ) «Запругу я тройку борзыхъ» երգի եղանակով:



18376

2013

